ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«03» մայիսի 2017 թվականի № 61-Ն

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2017 թվականի մարտի 22-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 25 և 2017 թվականի փետրվարի 16-ի «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության» թիվ 281 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը, «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2017 թվականի հունվարի 24-ի թիվ Ֆ-15/17 գրությունը և «Կրիվոյշին» ՍՊԸ-ի 2017 թվականի մարտի 30-ի թիվ 009/17 դիմումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Կրիվոյշին» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 25 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹ-29/556 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սաբորի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի ընդերքի տեղամասը՝ 1.X=4522418 Y=8509690, 2.X=4522695 Y=8509711, 3.X=4522831 Y=8509665, 4. X=4523049 Y=8509695, 5. X=4523145 Y=8509737, 6. X=4523123 Y=8509788, 7.X = 4523014 Y = 8509763, 8. X = 4522888 Y = 8509744, 9. X = 4522655 Y = 8509737, 10. X = 4522424 Y = 8509753 (տրված են՝ WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված տարածքում արդյունահանման աշխատանքներ կատարելու համար, հատկացնելով՝ 707,5 հազար մ^3 և լեռնահատկացման թիվ Լ-556 ակտը՝ 1.X=4522403 Y=8509756, 2,X=4522400 Y=8509687, 3,X=4522695 Y=8509705, 4.X=4522831 Y=8509660, 5,X=4523049 Y=8509690, 6,X=4523145 Y=8509736, 7,X=4523123 Y=8509789, 8,X=4523016 Y=8509766, 9,X=4522888 Y=8509747, 10,X=4522655 Y=8509740 (տրված են՝ WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 4.7 հա տարածքով:

2. Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 28,3 հազար մ^3 պաշար:

3. Ընդերքի գործակալության պետին՝

1) պատրաստել սույն հրամանի 1-ին կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սաբորի ավազակոպճային խառնուրդի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-556 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր), ծանուցել դիմումատուին և հրավիրել վերջինիս 10-օրյա ժամկետում պայմանագիրն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար.

2) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց հետո 10 օրվա ընթացքում, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքի վճարման անդորրագրի ներկայացումից անմիջապես հետո, ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին - ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5 Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո 2 ամսվա ընթացքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ